



ՅՈՒՆԻՍԵՖ

ԲԻԶՆԱԿ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ



կան առաքելության ներկայացուցիչները: Խորհրդաժողովին մասնակցեցին նաև Վրաստանի կառավարության Խորհրդա-

Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում կայացավ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կազմակերպած Խորհրդաժողովը՝ «Ներդրումը Վրաստանի ապագայում համդիսանում է վաղ հասակում երեխայի կյանքի եւ զարգացման ազգային պլան»:

Միջոցառմանը մասնակցեցին վարչապետ Բիժինա Իվանիշվիլին, գործադիր եւ օրենսդիր իշխանության, դիվանագիտական թմուխի անդամները: Մինչև միջոցառման սկսվելը, վարչապետը մանուկի համար մեկնաբանություններ չարեց: ՄԱՆ դեսպան Ռիչարդ Նորլանդը մեծապես կարևորեց Խորհրդաժողովը: Ինչպես ասաց նա, Վրաստանի կառավարությունը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ մեկտեղ, քննարկեցին այն գործողությունների ազգային պլանի մշակման ուղիները, որի օգնությամբ կբարելավվեն մինչև 5 տարեկան երեխաների սնունդը, բժշկական սպասարկման եւ կրթության ոլորտը: «Դա անհրաժեշտ է, որպեսզի երեխաներն ունենան առողջ ապրելակերպի հնարավորություն»,- նշել է Նորլանդը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍՎԻՐՔ

ՈՉ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԻՆ ԲՎՎԱՐԱՐՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եւ թույլ էր տալիս աշխատողներին հեռացնել՝ առանց պատճառները բացատրելու, իսկ նոր օրենսգրքում այդ նորմը խստացվել է: «Մենք մանրամասնորեն պարզաբանում ենք այն կետերը, ըստ որոնց կարելի է ազատել աշխատողին»,- նշել է Խունդաձեն:

անժամկետ պայմանագիր աշխատողի հետ, եթե նա կաշխատի ավելի քան 30 ամիս, նաև կանոնակարգվում է աշխատանքից ազատելու համար փոխհատուցումը: Աշխատանքային օրենսգրքի մեջ ուղղումներն ուժի մեջ կմտնեն օրենսգրքի հրապարակումից հետո: Խորհրդարանի որոշումից դժգոհ մնաց Վրաստանի միացյալ արհմիության ղեկա-

վար Իրակլի Պետրիաշվիլին: Նա հայտարարեց, որ աշխատանքային օրենսգրքի առաջին տարբերակը, որը հետագայում փոխվեց գործարարների պահանջով, ավելի էր կողմնորոշված քաղաքացու զբաղվածության կողմը: Սակայն ընդդիմությունը գտնում է, որ մնան օրենսգրքին էլ ավելի վնաս կհասցնի զբաղվածությանը երկրում եւ կկրճատի առանց այդ էլ փոքրաթիվ աշխատատեղերը:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պայմանների մասին» հրամանագրի մեջ: Վերջինիս համապատասխան, ուսուցչի վճարվող արձակուրդը սահմանվում է առնվազն երկու ամիս ժամանակով (40 աշխատանքային օր): Համապատասխան վճարը մանկավարժները կստանան արձակուրդ գնալուց առաջ:

Առանձին դեպքերում (օրինակ՝ էքստեռն քննություններ, աշնանային քննություններ եւ այլն), արձակուրդի ժամկետները սահմանվում են մախարաբուրային հետ պայմանավորվածությամբ: Այս տարվանից ուսուցիչները կարող են օգտվել վճարվող արձակուրդից, հուլիսի սկզբից, եւ պետք է դպրոց ներկայացնեն սեպտեմբերի 2-ից ոչ ուշ:

վածությամբ: Այս տարվանից ուսուցիչները կարող են օգտվել վճարվող արձակուրդից, հուլիսի սկզբից, եւ պետք է դպրոց ներկայացնեն սեպտեմբերի 2-ից ոչ ուշ:

ԱՐԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՊԱՌՆԱԼԻՔ՝ ՎՐԱՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Հունիսի 6-ին Youtube ցանցում հայտնվել են տեսահոլովակներ, որոնցում թալիբների անունից ինչ-որ մեկը վրիժառությանը է սպառնացել վրացի զինծառայողներին, վրաց ժողովրդին եւ Վրաստանի նախագահին:



Վրաստանի ներքին գործերի նախարար Իրակլի Դարիբաշվիլին: «Ցանկանում եմ հավաստել, որ այդ տեսագրությունն ընդհանուր ոչինչ չունի «Թալիբանի» հետ: Ըստ առկա տվյալների, տեսագրությունը բեռնվել է Վրաստանից, IP հասցեն պարզվել է եւ բացահայտվել գտնվելու վայրը: Ներկայումս իրականացվում են ակտիվ քննչական միջոցառումներ, դրանց են միացել Հետաքննությունների համերկային բյուրոն, ինչպես նաև մեզ ակտիվորեն օգնում է Իսրայելը»,- ասել է Դարիբաշվիլին:

Ավելի ուշ՝ հունիսի 6-ի երեկոյան, ահաբեկչական գրոհ է իրականացվել Աֆղանստանի Գիլնենդի նահանգում տեղաբաշխված վրացի զինծառայողների վրա, ինչի հետեւանքով զոհվել է 7, վիրավորվել՝ վրացի 9 զինծառայող: Վրաստանի նախագահի վարչակազմը պահանջում է հետաքննել այն համագամքը, որ համացանցում երեսան է եկել տեսահոլովակ՝ Աֆղանստանում գտնվող վրացի զինվորականների եւ նախագահ Միխեիլ Սասակաշվիլու հասցեին: Աֆղանստանում վրացի զինծառայողների, նրանց ընտանիքների եւ Վրաստանի նախագահի հասցեին սպառնալիքներ բովանդակող տեսահոլովակները բեռնվել են Վրաստանից, եւ դրանք ոչ մի առնչություն չունեն թալիբների հետ: Այս մասին հայտարարեց Դարիբաշվիլին:

ՆԱԽԱԳԱՅՎԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴՎՎԻԹ ԲԱՔՐԱԶԵՆ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵՎԱՆԾՈ՞Ւ...



Մի քանի օրից հետո, Վրաստանի նախկին կառավարող կուսակցությունը՝ «Միասնական ազգային շարժումը», կանվանի նախագահական ընտրություններին մասնակցելու իր թեկնածուին:

Առկա տեղեկատվության համաձայն, կուսակցության մեծամասնությունը պաշտպանում է Դավիթ Բաքրաձեի թեկնածությունը, իսկ ձերբակալված Վանո Մերաբիշվիլու թեկնածությունն արդեն չի քննարկվում: Վերջին ժամանակներում կատարված հարցումների տվյալների համաձայն, ընդդիմու-

թյան ղեկավարների շրջանում հասարակության ամենամեծ աջակցությունը ստացել է Դավիթ Բաքրաձեն՝ 48 տոկոս, իսկ Վանո Մերաբիշվիլու վարկանիշը կազմում է 30 տոկոս: «Կուսակցությունը գտնում է, որ ընտրություններում պետք է ներկայացված լինի ամենաուժեղ թեկնածուն, որն ունի հաղթելու առավել մեծ շանս, եւ օժտված է ամենահարուստ քաղաքական փորձով: Առկա են հետազոտական կազմակերպությունների եզրակացություններ, որոնց նշած վար-

կանիշներով մենք կղեկավարվենք... Կուսակցության մի շարք ներկայացուցիչներ առաջարկում են առաջադրել Վանո Մերաբիշվիլու թեկնածությունը նույնիսկ այն դեպքում, եթե նա լինի կալանքի մեջ: Սակայն, կուսակցության մեծամասնությունը, այդ թվում՝ նաև ես, գտնում ենք, որ նախագահական ընտրարշավին պետք է ներգրավված լինի Դավիթ Բաքրաձեն»,- ասել է Խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցիչ Նուրգալ Ծիկլաուրին:

ՄԵՎԵՆԱՐԿՈՒՄ Ե ՆԻՆՈ ԲՈՒՐՋԱՆԱՋԵԻ ՆԱԽԱԳԱՅՎԱԿԱՆ ԲԱՐՈՋԱՐԵԱՎԸ

Ժողովրդավարական շարժում կուսակցության առաջնորդ Նինո Բուրջանաձեն սկսում է նախընտրական արշավը:


Այդ մասին նա հայտարարել է հունիսի 12-ին իր կուսակցության գրասենյակում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ: Նինո Բուրջանաձեի խոսքով, 2012 թվականի հոկտեմբերի Խորհրդարանական ընտրություններից սկսած, ժողովրդավարական շարժումը մեծ աշխատանք է կատարել եւ այժմ ձեռնամուխ է լինում նախընտ-

րական ակտիվ արշավի: Նրա նախընտրական շտաբը գլխավորելու է Սամցխե-Ջավախեթի նախկին նահանգապետ Գիգլա Բարամիձեն: Նա նաև գլխավորելու է կուսակցության Թբիլիսիի կազմակերպությունը: «Հարգանքի է արժանի հանուն երկրի լավագույն ապագայի ակտիվ քաղաքականության եւ պայքարի մեջ մտնելու նրա

որոշումը: Մեզ համար մեծ պատիվ է, որ նա ընտրություն կատարեց մեր կուսակցության օգտին հաշվի առնելով այն, որ մենք հետեւողական պայքար ենք մղում եւ երբեք չենք համակերպվի ամարդարության հետ»,- ընդգծել է Նինո Բուրջանաձեն՝ ներկայացնելով Գիգլա Բարամիձեին:



Գիգլա Բարամիձեի:



ԱՄՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ՍԿԱՆՂԱԿԱՆ ԳԱՐՏՆԱՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ

ԱՄՆ-ում քրեական գործ է հարուցվել Կենտրոնական հետախուզական վարչության եւ Ազգային անվտանգության գործակալության աշխատակից Էդվարդ Սնուդենի նկատմամբ, որը հատուկ ծառայությունների գաղտնի փաստաթղթեր է փոխանցել ՋԼՄ-ներին:

ԿՀՎ-ի տեխնիկական ծառայությունների նախկին աշխատակից Էդվարդ Սնուդենը պատմել է, որ ԱՄՆ-ի հատուկ ծառայություններն օգտվում են այն տեղեկատվությունից, որը պահվում է աշխարհի խոշորագույն ինտերնետ-ընկերությունների սերվերներում: Բացի այդ, նա հայտնել է, որ Verizon ընկերության օգտատերերի միլիոնավոր հեռախոսագանգեր գաղտնասլավում են:

Սնուդենը հատուկ ծառայությունների այդ գործողությունները որակել է միջամտություն անձնական կյանքին: Այժմ նա գտնվում է Հոնկոնգում:

ԹՈՒՐԹԻԱ

ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԸ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայյիբ Էրդողանը մի քանի նախարարների մասնակցությամբ հունիսի 12-ին հանդիպել է Ստամբուլի Գեզի զբոսայգում շինարարություն իրագործելու վերաբերյալ կառավարության որոշման դեմ բողոքող ցուցարարների 11 հոգուց բաղկացած պատվիրակության հետ: Նա առաջարկել է այգին վերակառուցելու հարցով հանրաքվե անցկացնել Ստամբուլի բնակչության շրջանում: Թուրք ցուցարարները հայտարարել են, որ մտադիր են մնալ Ստամբուլի Գեզի զբոսայգում՝ ի հեճուկս երկրի վարչապետ Ռեջեփ Թայյիբ Էրդողանի հորդորի՝ 24-ժամում «մաքրել» այգին:

Նշենք, որ մայիսի 28-ից սկսված ցույցերին ոստիկանության եւ ցուցարարների միջև բախումներում 4 մարդ է զոհվել, 5000-ից ավելի վիրավորվել, հարյուրից ավելի մարդիկ ձերբակալվել են:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

ԶՐԿՎԵՑ ԶԱՐԳԱՑԱԾ ՊԵՏՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ

Ֆոնդային ինդեքսների աշխարհի առաջատար փրովայդեր MSCI Inc.-ը իջեցրել է Հունաստանի ֆոնդային շուկայի գնահատականը՝ նրան զարգացած շուկաների կատեգորիայից փոխադրելով զարգացողների խումբ: Այսպիսով, Հունաստանը դարձել է աշխարհի առաջին երկիրը, որը կորցրել է զարգացած պետության կարգավիճակը, որը MSCI-ն նրան շնորհել էր 2001 թվականին: Նշենք, որ Հունաստանում գործազրկության մակարդակը 2013 թվականի առաջին եռամսյակում աճել է մինչև ռեկորդային 27,4 տոկոս, 2012 թվականի չորրորդ եռամսյակի 26 տոկոսի դիմաց:

ՍԻՐԻԱ

ՄԵԾԱՆՈՒՄ Ե ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԶՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

Սիրիայում ամեն ամիս սպանում են 5 հազար մարդ, իսկ ընդամենը հակամարտության սկսվելուց ի վեր դրա զոհ է դարձել 93 հազար մարդ: Այս տվյալներն ընդգրկում են 2001 թվականի մարտից մինչև ընթացիկ տարվա ապրիլ ընկած ժամանակաշրջանը:

Ընդամենը ներկայիս վիճակագրական տվյալները պատրաստելիս՝ ստուգվել են 263 հազար մահվան մասին իրադարձությունների վայրերից ստացված տեղեկություններ: Հաշվի են առնվել միայն այն դեպքերը, երբ հայտնի է դարձել մահագանգի երեք գործոն՝ զոհի անունը, մահվան ամսաթիվը եւ վայրը: Զոհվածների 82,6 տոկոսը տղամարդիկ են: Սպանվածների թվում առնվազն 6,6 հազար անչափահասներ կան, ներառյալ՝ մինչև տասը տարեկան 1,7 հազար երեխաներ:

Պիլեյն ընդունում է, որ զոհերի իրական թիվը կարող է ավելի մեծ լինել:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՅՅԵՏՈՍԱ

ՎՐԱՍՏԱՆԸ ԽՍՏԱՑՆՈՒՄ Է ՎԻՉԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ


Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեն չի բացառում, որ կվերանայվի մի շարք երկրների հետ ազատակամացված վիզային քաղաքականությունը:

Նա հայտարարել է, որ Վրաստանում գոյություն չունեցող միգրացիայի քաղաքականություն, ինչը առաջացնում էր մեծ թվով թյուրիմացություններ տարբեր երկրների կամ մասնավոր անձանց հետ:

Փանջիկիձեն հաղորդել է, որ արդարադատության նախարարի ղեկավարությամբ ստեղծվել է հանձնաժողով, որը կմշակի միգրացիայի վերաբերյալ օրենսդրություն: Նա հավելել է, որ դա տեղի կունենա Եվրամիության հետ վիզա-ազատակամացման բնագավառում գործողությունների պլանի հաշվառմամբ:

«Չի բացառվում, որ փոփոխություններ կկատարվեն վիզային քաղաքականության մեջ: Վրաստանն առանց վիզայի հաղորդակցություն ունի 121 երկրների հետ, նրանցից 114-ի հետ՝ միակողմանի, ինչը տվյալ երկրների քաղաքացիներին թույլ է տալիս

առանց վիզայի Վրաստանում գտնվել 160 օր: Այդ երկրների մեծ մասը ոչ միայն չպատասխանեց նույն ձևով, այլև հայտնի չէ, թե արդյոք նրանք այդ տեղեկատվությունն ընդունել են ի գիտություն, թե՞ ոչ: Իրեն հարգող ոչ մի երկիր այդպես չպետք է վարվի: Այսպիսով, չի բացառվում, որ մի շարք երկրների նկատմամբ կփոխվի մոտեցումը: Առավել եւս, տվյալ մի շարք երկրներից զբոսաշրջիկներ չեն գալիս, եւ ներդրումներ չեն կատարում: Բացի դրանից, երբ աշխարհում այսպիսի իրավիճակ է, մենք պետք է բարձրացնենք մեր երկրի անվտանգությունը»,- հայտարարել է Փանջիկիձեն:



ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԴԱՅՏՆԻ ԵՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2013 թվականի միասնական ազգային քննությունները, որ սկսվեցին հունիսի 7-ին, կավարտվեն հուլիսի 17-ին:

Ինչպես հաղորդել են Ազգային քննական կենտրոնից, միասնական ազգային քննություններն ավանդաբար սկսվեցին վրաց լեզվի եւ գրականության քննությունից եւ անցկացվում են հունիսի 7-28-ը: Հուլիսի 1-2-ը տեղի կունենա քննություն ընդհանուր հմտություններից, հուլիսի 3-ին՝ գերմաներենից, հուլիսի 3-4-5-ին՝ անգլերենից, հուլիսի 8-ին՝ ֆրանսերենից եւ ռուսերենից: Հուլիսի 9-ին դիմորդները քննություն կհանձնեն աշխարհագրությունից, հուլիսի 10-ին՝ գրականությունից, հուլիսի 11-ին՝ պատմությունից, հուլիսի 12-ին՝ մաթեմատիկայից, հուլիսի 15-ին՝ կենսաբանությունից եւ նույն օրը կանցկացվեն ուսանողների դրամաշնորհային մրցույթի քննություններ: Հուլիսի 16-ին դիմորդները քննություն կհանձնեն քիմիայից, հուլիսի 17-ին՝ ֆիզիկայից:

ԽԱՆՈՒԹՆԵՐԸ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գյուղատնտեսական գործիքների գների արհեստական բարձրացման համար, ամբողջ երկրի մասշտաբով, 500-ական լարիով տուգանվել է 129 խանութ: Իսկ կրկնակի խախտման համար 16 խանութ հեռացվել է նախագծից: Գարնանային աշխատանքներում սակավահող ֆերմերների աջակցության նախագծի ղեկավար Դավիթ Կիկնածեն այցելեց Քութայիսիում գտնվող գյուղատնտեսական խանութներ:

Նախագծի շրջանակներում, ամբողջ երկրում բացվել է գյուղատնտեսական ապրանքների եւ գործիքների իրացման 884 կետ: Դրանցից 31-ը գործում է Քութայիսիում:

ԿԱՆԱՔ՝ ԿԱՇՆՈՒՄ ՀԱՄԱՐ

Կաշառք ստանալու մեղադրանքով կալանվել է Վրաստանի տարբեր տարածքային մարմինների 7 լիազոր: Այդ մասին հաղորդել են ՆԳՆ-ից: Չեթրակալվածների թվում են նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղի լիազոր Հովհաննես Թեւանյանը եւ գործընթացից մասնակցած Սամվել Լեզարյանը: Քննության տվյալների համաձայն, 7 լիազորները 2013 թվականի հունիսի 11-12-ը կազմել եւ տվել են կեղծ տեղեկանք՝ խոչոր եղջերավոր անասուն ձեռք բերելու մասին, եւ փոխարենը ստացել որոշակի գումարներ: Կատարվում է հետաքննություն:

ԿԱՆԻՎԵԼ Է ԱՐԱՔԵԿՉԱԿԱՆ ԱԿՏ

Ներքին գործերի նախարարությունը թբիլիսիում կանխել է ահաբեկչական ակտ: Հունիսի 13-ի առավոտյան, տարբեր իրավապահ գերատեսչությունների համատեղ գործողությունների արդյունքում, մայրաքաղաքում ձերբակալվել են օտարերկրյա քաղաքացիներ Միխայիլ Կադիբել եւ Ռիզվան Օմարովը: Նրանց բնակարաններում խուզարկության ժամանակ հայտնաբերվել է մեծ քանակությամբ պայթուցիկ նյութեր, նաեւ կեղծ անձնագրեր: Նշենք, որ Կադիբելին փնտրում է եվրոպական երկրներից մեկը, ուր նա 2012 թվականին կատարել է հանցագործություն:

ՔՈՒԹԱՅԻՍԻՈՒՄ ՓԼՎԵԼ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՄԻ ՄԱՍԸ

Քութայիսիում Վրաստանի խորհրդարանի նոր շենքի գրոյակյան հարկի հատվածներից մեկում հունիսի լույս 11-ի գիշերը փլվել է տանիքի մի մասը: Տանիքի փլվելու պատճառ է դարձել հրշեջ խողովակի վնասվածքը, որից ուժգին ճնշումով ջուր է դուրս մղվել՝ քանդելով շենքի պատերից մեկը: Տուժածներ չկան: Այժմ ընթանում են մաքրման աշխատանքներ, իսկ առաջիկա ժամերին կսկսվի շենքի վնասված մասի վերականգնումը:

ԱՐԴԱՐԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ



ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆ ԸՆՏՐՈՒՄ Է ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԱՆՂԱՄՆԵՐԻՆ

Դատավորների արտահերթ խորհրդաժողովում երկու փուլով անցկացվեցին արդարադատության բարձրագույն խորհրդի նոր անդամների ընտրություններ:

դատարանի դատավոր Թամար Ալանիան:

Պալատի եւ կոլեգիայի նախագահի քվեարկությամբ արդարադատության խորհրդում ընդգրկվել են Մերաբ Գաբինաշվիլին, Շոթա Գեցաձեն եւ Վրաստանի Գերագույն դատարանի փոխնախագահ Զաքա Մեիշվիլին:

Խորհրդի անդամ են մնում Գերագույն դատարանի նախագահ Կոնստանտին Կուր

լաշվիլին եւ դատավոր Գիորգի Շավիաշվիլին:

Դատավորների խորհրդաժողովն արդարադատության բարձրագույն դպրոցի անկախ խորհրդի նախագահ է ընտրել դատավոր Մամուկա Ախվեղիանուն: Նրա թեկնածությունը պաշտպանել է խորհրդաժողովում ներկա գտնվողների մեծամասնությունը՝ 197 հոգի:

Քվեարկության արդյունքների հրապարակումից հետո, Վրաստանի Գերագույն դատարանի նախագահ Կոնստանտին Կուրլաշվիլին, որը վա

րում էր դատավորների խորհրդաժողովը, Մամուկա Ախվեղիանուն շնորհավորեց նոր պաշտոնում ընտրվելու կապակցությամբ եւ նշեց, որ նրա վրա դրվում է շատ կարեւոր ու պատասխանատու առաքելություն:

Վրաստանի Գերագույն դատարանի նախագահ Կոնստանտին Կուրլաշվիլին հայտարարել է, որ դատավորների խորհրդաժողովն ամբողջ հասարակայնությանը կարողացավ ցույց տալ, որ դատավորների անձնակազմը միասնական է:

«ՍԵՎԾՈՎՅԱՆ ՄԵՏԱՔՍԵ ՈՐԴՈՒ ՄԻՋԱՆՑՔ»

ՎՐԱՍՏԱՆԸ ԸՆԴԳՐԿՎՈՒՄ Է ՆԱԽԱԳԾԻ ՄԵՋ

«Տածրելի» հիմնադրամը, Եվրամիության ֆինանսավորմամբ, իրականացնում է «Սեւծովյան մետաքսե ուղու միջանցքի» նախագիծը, որի մեջ ընդգրկվում է Վրաստանը:

Նախագծով պլանավորվում է տեղադրել տեղեկատվական ցուցատախտակներ եւ ճանապարհային ուղղությունների ցուցանշաններ Վրաստանի մշակութային ժառանգության հուշարձանների եւ բնապատկերների մասին: Դրանցում, բացի հուշարձանի լուսանկարից եւ նկարագրումից, կներկայացվի QR կոդը, որի օգնությամբ զբո

սաշրջիկները կարող են այցելել նախագծի կայք-էջը եւ տեղեկատվություն ստանալ նրանում ընդգրկված բոլոր հուշարձանների ու մերձակա տուրիստական ենթակառուցվածքի մասին:

Նախագիծը կազմված է երեք հիմնական բաղադրամասերից. իրական ճանապարհը բաղկացած է 60 մշակութային-պատ

մական հուշարձաններից, տեղեկատվական պանելներ՝ կազմված են երեք լեզվով եւ այնտեղ նշված է այսպես կոչված QR կոդը, օնլայն տեղեկատու, որը տեղական ուղեկցորդներին թույլ կտա ապահովել սպասարկումների ցուցակը, այն է՝ բնակարան, սնունդ, տեղական գործունեություն, հուշանվերներ, ձեռագործներ, տեղական ուղեկցորդներ եւ այլն:

Նախագծի մեջ ընդգրկված են Վրաստանը, Հայաստանը եւ Թուրքիան:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրացական բուհերի ուսանողները, շրջանավարտները եւ պրոֆեսորները տարածել են Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլին ուղղված դիմում՝ պահանջելով ընդհատել «Բարձրագույն կրթության մասին» օրենքում պլանավորվող ուղղումները:

Նոր օրինագծի համաձայն, որն արդեն ներկայացվել է խորհրդարան, բուհի ղեկավարի պաշտոնի թեկնածուն անպայման պետք է ունենա դոկտորի աստիճան կամ դրան հավասարեցված գիտական աստիճան: Բացի դրանից, փոխվում է ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշա

տորի աստիճան կամ դրան հավասարեցված գիտական աստիճան: Բացի դրանից, փոխվում է ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշա

նակելու եղանակը՝ նրան կնշանակվի վարչապետը (այլ ոչ թե կառավարությունը), եւ նա իր գործառնությունները կկատարի մինչեւ բուհի ակադեմիական խորհրդի կողմից նոր ղեկավար ընտրելը:

«Այդ փոփոխությունները եւս մեկ քայլ են Վրաստանի բուհերի ինքնավարությունը սահմանափակելու ճանապարհին:

Համարում ենք, որ համալսարանի ինքնավարության բարձր որակի եւ նրա ուսումնագիտական որակի միջեւ գոյություն ունի անմիջական կապ, համապատասխանաբար, «Բարձրագույն կրթության մասին» օրենքում այդ ուղղումները կատարելը կվնասի Վրաստանի ակադեմիական համակարգին»,- ասվում է դիմումի մեջ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՆՎԱՋԵԼ Է ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

2011 թվականի համեմատությամբ, Վրաստանում 2012 թվականին գործազրկության մակարդակը նվազել է 0,1 տոկոսով եւ կազմել 15 տոկոս:

Ինչպես հաղորդել են «Վրացվիճակագրությունից», 2012 թվականին բնակչության ակտիվության մակարդակը բարձրացել է 1,7 տոկոսով, աշխատանքի տեղավորման մակարդակը՝ 1,4 տոկոսով:

Պետք է նշել, որ ակտիվության եւ աշխատանքի տեղավորման մակարդակը բարձ

րացել է ինչպես գյուղական վայրերում, այնպես էլ՝ քաղաքային պայմաններում:

Գործազրկության մակարդակը տղամարդկանց շրջանում կրճատվել է 0,6 տոկոսով, իսկ կանանց շրջանում ընդհակառակը՝ բարձրացել է 0,7 տոկոսով: Անակտիվության մակարդակը կանանց

շրջանում գրեթե երկու անգամ ավելի է, քան տղամարդկանց շրջանում: 2012 թվականին կանանց շրջանում անակտիվության մակարդակը կազմել է 42,6 տոկոս, տղամարդկանց մոտ՝ 21,8 տոկոս:



ՎՐԱՍԱՆ-ՌՈՒՍԱՍԱՆ

Վ. ՊՈՒՏԻՆ. «ՄԵՆՔ ՑԱՆԿԱԼՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ, ՎԵՐԱԿԱՆՁՆԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Ռուսաստանի նախագահ Վադիմիր Պուտինը Russia Today հեռուստաընկերության նոր հեռուստատեսային համալիրի բացման ժամանակ հայտարարեց, որ Ռուսաստանը ցանկանում է վերականգնել Վրաստանի հետ հարաբերությունները ողջ ծավալով, իսկ իրավապահ մարմինների համագործակցությունը կդառնա առաջին քայլը մուտքի արտոնագրի վերացման ուղղությամբ:

«Մենք ցանկանում ենք համագործակցել, ցանկանում ենք աշխատել, վերականգնել հարաբերություններն ամբողջ ծավալով»,- ասել է Պուտինը եւ ընդգծել, որ եթե հաջողվի կարգավորել նման աշխատանք իրավապահ մարմինների, հատուկ ծառայությունների ուղղությամբ, դա կլինի առաջին քայլը, որպեսզի երկու երկրների միջև վերականգնվի առանց վիզայի ռեժիմը:

ՌԴ նախագահն ընդգծել է նաև, որ Ռուսաստանը հետագայում եւս կգարգացնի հարաբերությունները Վրաստանի հետ, մասնավորապես՝ վրացական ապրանքները Ռուսաստան տեղափոխելու ուղղությամբ: «Մենք որոշում ենք կայացրել վրացական ապրանքները ռուսական շուկա թողնելու մասին: Հասկանում ենք, որ դա կարելու է, հնարավոր է՝ ոչ առանցքային հարց է, սակայն դա կարելու է Վրաստանի համար, նրա տնտեսության համար: Մենք հետագայում

եւս կգործենք այս ուղղությամբ: Կգարգացնենք հարաբերությունները»,- ավելացրել է Պուտինը:

Պ.ԶԱԲԱՐԵՆԻՆԻ. «ՎՐԱՑ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՎԵԼՈՒ ԵՆ՝ ԵԼՆԵԼՈՎ ՎՐԱՍԱՆԻ ՀԱՅՏԻՑ»

Վերաինտեգրման պետնախարար Պատա Ջաբարեիշվիլին համոզված է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները հարկավոր է կարգավորել՝ սակայն միայն ելնելով Վրաստանի շահերից: Նա ասել է, որ անհրաժեշտ է գտնել ընդհանուր լեզու արխագների եւ օսերի հետ ու կարգավորել հակամարտությունը նրանց միջև:

Անդրադառնալով Վրաստանի մասնակցությանը Սոչիի օլիմպիադային՝ Պատա Ջաբարեիշվիլին ասաց. «Մենք պետք է պատրաստ լինենք այն հանգամանքին, որ Սոչիի օլիմպիադան կանցնի հանգիստ, անվտանգ իրադրության մեջ: Վրաստանը, ելնելով պետական եւ տարածքային անվտանգությունից, պետք է նպաստի դրան»:

Ջաբարեիշվիլին այս մասին հայտարարեց «Ռուսթավի-2» հեռուստաընկերության եթերում՝ մեկնարկելով Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հայտարարությունը: Վերջինս ցանկություն է հայտնել, որպեսզի երկու երկրների հատուկ ծառայությունները համագործակցեն օլիմպիադայի անվտանգության ապահովման առումով:

ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎ-ՊԱՍՍԻՎ

Օրերս Պրահայում անցկացվեց Ռուսաստանի եւ Վրաստանի ներկայացուցիչներ Գրիգորի Կարասինի եւ Ջուրաբ Աբաշիձեի թվով երրորդ հանդիպումը: ՌԴ արտաքին գործերի փոխնախարարի խոսքերով, Մոսկվան պատրաստ է վերականգնել դեռևս 2008 թվականից խզված դիվանագիտական հարաբերությունները: Որքանով էլ լավատեսական արտահայտություններն արտացոլում հարաբերությունների նորմալացման գործընթացի իրական վիճակը: Կարելի է արդյոք ասել, որ երկու երկրների ներկայացուցիչների՝ մարտի մեկին կայացած երկրորդ հանդիպումից հետո, որոշակի առաջընթաց է նկատվել: Այդ մասին «Ազատություն» ռադիոյի «Էյաո Կավկասում» պատմեց Ազգամիջյան հարաբերությունների հիմնախնդիրների քաղաքական եւ ռազմական վերլուծության ինստիտուտի միջազգային բաժնի վարիչ Սերգեյ Մարկեդոնովը:

Դիվանագիտական բանակցությունների յուրաքանչյուր նոր փուլն ընթանում է որոշակի իրադարձությունների ենթատեքստում, որն էլ անմիջականորեն ազդեցություն է գործում հանդիպման արդյունքների վրա: Մարտի մեկից մինչև հունիսի 5-ը ընկած ժամանակահատվածում ռուս-վրացական հարաբերությունների նորմալացման գործընթացում ի՞նչը կարելի է գրանցել ակտիվի եւ ի՞նչը՝ պասսիվի պոնակներում:

Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեն միաձայն պաշտպանեց Սոչիի առաջիկա օլիմպիադային երկրի մասնակցությունը: Մոսկվայի համար դա կարելու ազդանշան էր, քանի որ խաղերն ընկալվում են ոչ միայն որպես սպորտի տոն, այլև կարելու է Ռուսաստանի ար-

տաքին քաղաքական ներուժի ցուցադրումը: Պլյուսների թվում կարելի է նշել նաև Ռուսաստան վրացական հանքային ջրերի արտահանման մեկնարկը եւ «Ղազբեգի-Վերին Լարսի» սահմանային անցումակետի աշխատանքի փոփոխությունը (այն ներկայումս աշխատում է շուրջօրյա ռեժիմով): Դա թեթևաբեռի համար խոստումնալից ազդանշան է, առևտրա-տնտեսական կապերը կարող են ունենալ աճի միտում:

Միաժամանակ, վերոնշյալ ժամանակահատվածը չի անցել առանց վիճարկելի պահերի եւ նույնիսկ Վրաստանի կողմից բողոքի նոտայի: Պրահայի հանդիպումից տառացիորեն մեկ շաբաթ առաջ, ռուս սահմանապահները տեղափոխեցին վրաց-օսեթական սահմանագիծը (որը Ռուսաստանը համարում

է միջպետական, իսկ Վրաստանը՝ վարչական) 300 մետրով Շիդա Քարթլիի տարածքի խորքը: Այդ քայլը Վրաստանի ԱԳՆ գնահատեց որպես ոչ բարեկամական եւ Ռուսաստանի կողմից տարածքային ամբողջականության սկզբունքի հերթական խախտման ցուցադրում:

Սակայն, առանց տեղի ունեցածի փաստական կողմի, հարկ է ուշադրություն դարձնել նրա վրա, թե կողմերը ինչպես արձագանքեցին դրան: Ռուսական կողմը խոստացավ մանրամասն ուսումնասիրել հիմնախնդիրը այն հաշվով, որպեսզի դրան վերադառնան ժնեւի բանակցությունների ձեւաչափով: Ընդամենի, Գրիգորի Կարասինը ուշադրությունը բեւեռեց հարավ-օսեթական իշխանությունների վրա:

Իսկ վրացական կողմը ռուս սահմանապահների գործողությունների կապակցությամբ բավականին հանգիստ արձագանքեց: Դրա գլխավոր քննադատը Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն էր, այն ժամանակ, երբ կառավարության ղեկավարը (որը գործնականում արդեն իր ձեռքերում է կենտրոնացրել երկրի կառավարման բոլոր լծակները) հայտարարեց սույն միջադեպի նկատմամբ հանգիստ եւ հավասարակշռված մոտեցման անհրաժեշտության մասին: Անհնար է պատկերացնել

պաշտոնական թբիլիսիի կողմից նման արձագանքը մեկ կամ երկու տարի առաջ: Երբ քաղաքական Օլիմպոսը պատկանում էր Սաակաշվիլուն, կովկասյան հանրապետության նկատմամբ Մոսկվայի յուրաքանչյուր գործողություն օգտագործվում էր հայրենասիրական կրքերի բորբոքման համար: Ներկայիս կառավարող կոալիցիան գերադասությունը տվեց հաղորդակցման առավել հավասարակշռված ոճին, թեպետ բնականաբար, պահպանվեցին Մոսկվայի դեմ բողոքներն ու դիմումները միջազգային հանրությանը: Սակայն, սույն պահանջների ներկայացման լեզուն դարձավ ավելի չոր, ընդամենի զգայականությունն էլ՝ ավելի քիչ: Արդյունքում, միջադեպի կապակցությամբ հետագա բանավեճը տեղափոխվեց ժնեւ: Բացառված չէ, որ գտնվի փոխհամաձայնեցված, վրաց-ռուսական համակարգային հիմնախնդիրներին չառնչվող որոշում:

Հարկ չկա անտեսել նաև նյուս ենթատեքստերը: Նախ՝ անմիջականորեն Վրաստանի ներքաղաքական դիմամիկան: Սաակաշվիլու դեմ հարձակումը շարունակվում է, դրա պարզ վկայությունը նրա աջ թեւի, նախկին վարչապետի եւ ներքին գործերի նախկին նախարար Վանո Մերաբիշվիլու ձերբակալությունն է: Երկրորդը Աֆ-

ղանստանում վերջերս տեղի ունեցած իրադարձությունները, որը ցուցադրեց այնպիսի Վրաստանի անդամակցության վերաբերյալ ՆԱՏՕ-ական պաշտոնական ճառագիտության եւ միջազգային գործողությունների ընթացքում մարդկային զոհերի աճի ուղեկցությամբ, այդ ուղու վրա իրական առաջընթացի բացակայության միջև առկա ճեղքվածքը: Սույն փաստերն էլ որոշակի նշանակություն ունեն, սակայն ավելի շուտ Վրաստանի երրորդ նախագահի ժառանգության վերափոխմամբ բավարարված Մոսկվայի համար:

Սակայն, որքան էլ Կրեմլը ուրախանա, միեւնույն է, Վրաստանի նոր կառավարությունը տոտալ արևատական չի իրականացնի: Ռուստի, դիվանագիտական հարաբերությունների վերականգնման պատրաստակամության վերաբերյալ Գրիգորի Կարասինի հայտարարությունն ավելի շուտ ցանկալին իրականության տեղ ընդունելու փորձ էր: Ներկա պայմաններում, առանց արխագական եւ հարավ-օսեթական ուղղություններով փոփոխությունների իրականացման, նման վերականգնումը դժվար թե իրականացվի: Սակայն, Մոսկվան տվյալ պարագայում պատրաստ չէ դիմել զիջումներին:

Վաշինգտոն, ԱՄՆ

ՏԱՐԱԾՈՒՐԱՆ

ԻՆՉ ՆԱԽԱԳԾԵՐ ԿԻՐԱԿԱՆԱՅՎԵՆ ՍԱՄՅՈՒՆ-ԶԱՎԱԽԵԹՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարարության նախաձեռնությամբ, երկրի բոլոր մունիցիպալիտետներում մշակվեցին Վրաստանի կենտրոնական իշխանության կողմից ֆինանսավորման ենթակա, առանձին գյուղերի համար առաջնահերթային նախագծերը:

Ընդհանուր առմամբ, Վրաստանի ողջ մասշտաբով մշակվեց եւ նախարարության, այն է՝ կառավարության հաստատմանը ներկայացվեց ավելի քան 1800 նախագիծ: Հատուկ համեմատողովի կողմից վերոնշյալ քանակությունից առանձնացվեց 600 նախագիծ, որից իրականացման համար կենտրոնական բյուջեից հատկացվել է շուրջ 200 միլիոն լարի: Միանգամից նշենք, որ առաջնահերթությունների ընտրության իրավունքը վերապահվել էր անմիջականորեն բնակչությանը, թեպետ ընտրված առաջնահերթություններին կոնկրետ նախագծային բնույթի հաղորդման ու առաջարկությունների մշակման համար առանձնացվել էին տարբեր ուղղությունների մասնագետներից կազմված խմբեր:

Հունիսի մեկին Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարարությունում կայացավ հանդիպում տարածաշրջանային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը գերատեսչության, ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի, մունիցիպալային զարգացման հիմնարկամի, միացյալ ջրամատակարարման եւ կայուն մնացորդների կառավարման ընկերությունների առաջին դեմքերը՝ նախարար Դավիթ Նարմանիայի գլխավորությամբ, ընդհանուր առմամբ, ներկայացրին նախարարության վերահսկողության ներքո իրականացվելիք նա-

խագծերը: Ընդգծելով իրականացվելիք նախագծերի բացառիկ նշանակությունը նախարարը հայտարարեց. «Մեզ համար նշանակալից է որակը, ուստի ջրի եւ կամուրջների հարցով կանցկացվի փորձաստուգում: Ներկայումս հիմնախնդիրային այն է, թե այդքան մեծ ծավալի աշխատանքների իրականացման պայմաններում իրենց որքանով կարողարացնեն շինարարական կազմակերպությունները: Առավելագույն ծոգում ենք ստեղծել աշխատանքային պայմաններ եւ նույնիսկ 10 օրվա կատարած աշխատանքների համար գումարը փոխանցում ենք»:

Փոխնախարար Շոթա Մուրդուլին, պատասխանելով անցյալ տարվա համեմատությանը այս տարի իրականացվող նվազ քանակության նախագծերի մասին ընդդիմության կողմից հանձնարարի սպող դիտողություններին, հայտարարեց, որ անցյալ տարվա համեմատությամբ, ընթացիկ տարվա առաջին եռամսյակի տվյալները, վերոնշյալ տեսանկյունից ավելացել են:

«Ենթակառուցային օբյեկտների թիվը, անցյալ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ, 36 տոկոսով ավելի է: Անցյալ տարվա համեմատությամբ, այս տարի այդ նպատակով ծախսվում է 180 միլիոն լարիով ավելի,- հայտարարեց Շոթա Մուրդուլին եւ հավելեց, որ, անցյալ տարվա համեմատությամբ, ֆինանսավորվելու է 115 տոկո-

սի նախագիծ: Դրանք վերաբերում են գազի, ջրի եւ աղբի դուրսբերման, շահագործման հետ կապված հարցերին, թեպետ հիմնական ավելացումը բաժին է ընկնում ավտոբանների շինարարությանը»:

Փոխնախարարը իր խոսքում անդրադարձավ նաև նախագծերի իրականացման համար հայտարարված մրցույթների քանակի հարցին: Նրա խոսքերով, ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի կողմից անցկացված մրցույթները՝ ինչպես արժեքի, այնպես էլ՝ քանակի տեսանկյունից, մի քանի անգամ գերազանցում են անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշերը: Այսպես, 2012 թվականին անցկացված 52 մրցույթի եւ նախագծերի իրականացման համար հատկացված 43 միլիոն լարիի դիմաց, այս տարվա առաջին եռամսյակում արդեն անցկացվել է 65 մրցույթ, իսկ նախագծերի համար հատկացվել է 54,3 միլիոն լարի:

Այժմ՝ կոնկրետ Սամցխե-Չավախետիի տարածաշրջանում իրականացվելիք նախագծերի մասին:

Տարածաշրջանի նակարդակով, նախարարության հավանությանն է արժանացել 35 նախագիծ, որից 19-ը վերաբերում է ճանապարհներին, 14-ը՝ ջրատարներին, եւ 2-ը տարբեր բնույթի են:

Կոնկրետ մունիցիպալիտետների հաշվարկով, Ախալքալաքիում կիրականացվի 9 նախագիծ՝ 6-ը ճանապարհային է, 2-ը՝ ջրա-



մատակարարման եւ մեկնել է՝ Արագվա գյուղի ոռոգման համակարգի ակունքային կառույցի վերականգնմանը: Նիմոնմիդայում ֆինանսավորվում է երեք նախագիծ՝ 2-ը ճանապարհային եւ մեկն էլ՝ քաղաքի փողոցների վերականգնման, Ախալքալաքի մունիցիպալիտետում ծրագրվել է 13 նախագիծ՝ 9-ը ջրամատակարարման եւ 4-ը ճանապարհային, Ասպինձայում կիրականացվի 3 նախագիծ, եւ բոլոր երեքն էլ վերաբերում են ճանապարհներին: Բորժոմիում համաձայնվեցված 4 նախագծերից երկուսը վերաբերում են ճանապարհներին, մեկը՝ ջրամատակարարմանը, իսկ մեկն էլ Ապրիլի 9-ի փողոցի կարգավորմանը: Նույնպես երեք նախագիծ կիրականացվի Աղիգեմիում, որից երկուսը վերաբերում են ճանապարհներին, իսկ մեկը՝ ջրամատակարարմանը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)